

Տտեսագետներն ու վերլուծաբանները դեռևս չեն կարողանում տալ ներկա տնտեսական ճգնաժամից ելքի դեղատոմսեր, քանի որ այն շարունակվում է երբևիտ տնտեսական ու սոցիալական նոր ցնցումներ (իսկ ամանձին երկրներում՝ արդեն նաեւ քաղաքական), բացի այդ՝ ոչ ոք չի կարող երաշխավորել նոր ճգնաժամերի բացառումը: Ակնհայտ է, սակայն, որ մարդկությունը կարող է դասեր քաղել անցյալի ճգնաժամերից, գտնել դրանցից ելքի ուղիները, արդյունավետ կառավարման առկայության եւ համագործակցության շնորհիվ վստահությամբ նայել ապագային: Այդ է վկայում նաեւ մարդկության անցած ուղին, երբ ճգնաժամից դուրս գալու միջոցների մշակման ու դրանց կիրառման արդյունքում չեզոքացվել են ճգնաժամերի թողած հետեւանքները, եւ երկրների կառավարությունները հաղթանակած են դուրս եկել ստեղծված ծանր իրավիճակներից:

Հայաստանի Հանրապետությունում տնտեսական ճգնաժամի պատճառները վերլուծելիս պետք հաշվի առնել հետեւյալը.

- Հայաստանը սերտորեն ինտեգրված չէր ֆինանսական այն շուկաներում, որոնք ներկա ֆինանսատնտեսական ճգնաժամի սկզբնաղբյուրը դարձան,

- Հայաստանի արժեթղթերի ու ապահովագրական շուկաները նույնպես զարգացած չեն,

- տրանսֆերտների ներհոսքի կրճատումը եւս Հայաստանի տնտեսական աննախադեպ անկման պատճառ լինել էր կարող:

Կարծում ենք, որ ՀՀ տնտեսության աննախադեպ խոր՝ անկման իրական պատճառներն այլ են, մեծամասամբ՝ ներքին, եւ պայմանավորված են ՀՀ տնտեսական զարգացման վերջին տարիներին թույլ տված սխալներով ու վրիպումներով:

Առաջին պատճառը տնտեսության կենտրոնացումն է: ՀՀ-ում տնտեսության կենտրոնացման գործընթացները չեն կանոնակարգվել տնտեսական քաղաքականության՝ հատկապես հակամենաշնորհային գործիքներով, ինչի արդյունքում ձեւավորվել է կլանային համակարգ: Այսպիսով՝ մենաշնորհների առկայությունը խորացնում է տնտեսական ճգնաժամը, թույլ չի տալիս, որ տնտեսական հիմնախնդիրը ցրվի, հակազդում է գների իջեցմանը:

Երկրորդը սոցիալական բեւեռացումն է: Հայաստանում հարստության կենտրոնացվածության աստիճանը 28.8 անգամ մեծ է, քան ԱՄՆ-ում, 14 անգամ մեծ, քան Ռուսաստանում եւ շուրջ 2 անգամ մեծ, քան Ուկրաինայում: Սոցիալապես բեւեռացված հասարակություններում, եկամուտների հարկավորման հարթ (ոչ պրոգրեսիվ) համակարգի առկայության դեպքում, տնտեսական անկման յուրաքանչյուր տոկոսին, որպես կանոն, հաջորդում է բյուջեի եկամուտների անկում ավելի քան մեկ տոկոսով:

Երրորդ պատճառը ՀՆԱ-ի ոչ արդյունավետ կառուցվածքն է: Վիճակագրական տվյալները թույլ են տալիս արձանագրել վերջին տասնամյակի ընթացքում Հայաստանի ՀՆԱ-ի կառուցվածքի հետեւյալ հիմնական փոփոխությունները.

- ✓ շինարարության (հատկապես՝ էլիտար) շեշտակի աճ,
- ✓ գյուղատնտեսության ոլորտի տեսակարար կշռի նվազում,
- ✓ արդյունաբերության տեսակարար կշռի նվազում²,
- ✓ արտահանման փոքր ծավալներ ու դրա հետ կապված՝

ՀՆԱ հաշվարկման մեթոդաբանական խնդիրներ:

Զորրորդ պատճառը հարկային անարդյունավետ համակարգն է, որը բնութագրվում է որպես ոչ ճկուն եւ քարացած: Նախ՝ բյուջեի հարկային եկամուտներում անուղղակի հարկերի տեսակարար կշռը վերջին տարիներին ավելացել է: Երկրորդ՝ ՀՀ-ում փաստացի հարկումն իրականացվում է ոչ թե ըստ օրենքի, այլ ըստ երկրի խոշոր տնտեսավարողների «թելադրանքի»: Մի քանի տասնյակ օլիգարխները հարկային դաշտում գործում են իշխանությունների թելադրանքով, այս պարագայում եւս անուղղակի հարկերի առաջնությունը պարտադիր է: Երրորդ՝ դանդաղ են ընթանում հարկային համակարգի բարեփոխումները: Մասնավորապես՝ այդպես էլ չլուծվեց արտահանման ժամանակ ԱՄՀ-ի վերադարձի մեխանիզմը, օրենսդրորեն արմատավորվեց կանխվճարների արատավոր համակարգը, տնտեսավարող սուբյեկտների կողմից բյուջեի վարկավորումը դարձավ մշտական պրակտիկա եւ այլն: ԱՄՀ-ի վերադարձի «կռիվը» ԱՊՀ երկրներում դարձել է ստվերային տնտեսության գրեթե ամենալուրջ գործոնը:

Հինգերորդ, Հայաստանի Հանրապետությունում 2009թ. տնտեսական անկման հիմնական պատճառներից է նաեւ երկրի տնտեսության ձեւախախտումը՝ կապված այն հանգամանքի հետ, որ շինարարության ճյուղը վերջին տասը տարիներին տնտեսության մեջ զբաղեցրել է անհամեմատ մեծ ծավալ (ՀՆԱ-ի շուրջ 30%-ը): 2009թ. ՀՆԱ-ի ընդհանուր անկման մեջ, որը կազմել է 14.4%, շինարարության բաժինը կազմել է 11.4% (ինչն ընդհանուր անկման շուրջ 80%-ն է), արդյունաբերությանը (ներառյալ էներգետիկան)՝ 1%, հարկերինը (առանց սուբսիդիաների)՝ 2.3%:

Համաշխարհային ֆինանսական եւ տնտեսական ճգնաժամի բացասական ազդեցության հիմնական հարվածն ընդունեց Հայաստանի տնտեսության իրական հատվածը: 2009թ. հունվար-դեկտեմբերին արդյունաբերական արտադրանքի ծավալը Հայաստանում ընթացիկ գներով, նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատ, նվազել է 7.8%-ով, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը՝ 0.1%, իսկ անասնապահությունում արտադրությունը աճել է 1.0%-ով: ՀՀ-ում շինարարությունում կատարված կապիտալ ներդրումները

ՃԳՆԱԺԱՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ շԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՔԱՅՆԵՐԸ

Արա
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
«Ամերիա»
ՓԲԸ
ֆինանսական
տնօրեն



2009թ. 2008թ. համեմատ նվազել են 36.4%-ով:

Այնուամենայնիվ, բացասական բոլոր հետեւանքներով հանդերձ, ճգնաժամը նաեւ հնարավորություն է, որը պետք է ընկալել եւ ծառայեցնել հետագա տնտեսական զարգացմանը:

Պետական հակաճգնաժամային արդյունավետ քաղաքականությունը ենթադրում է ինչպես դրամավարկային, այնպես էլ հարկաբյուջետային քաղաքականության գործիքների համալիր եւ միաժամանակյա իրագործում՝ ուղղված ֆինանսական հատվածում ճգնաժամի բացասական հետեւանքների նվազեցմանը եւ տնտեսության իրական հատվածի ֆինանսավորման անհրաժեշտ պայմանների ապահովմանը: Կենտրոնական բանկը պետք է իրականացնի դրամավարկային խթանող քաղականության մի շարք միջոցառումներ (բանկերի վերաֆինանսավորման ծավալների ավելացում, ռեպո տոկոսադրույքի իջեցում 5-6%-ի սահմաններում, անհրաժեշտության դեպքում բանկերին կարճաժամկետ առանց գրավի վարկերի տրամադրում, պարտադիր պահուստավորման նորմատիվի իջեցում, պետական պարտատոմսերի ետգնում երկրորդային շուկայից եւ այլն)՝ կանխելու համար ֆինանսական ճգնաժամի բացասական հետեւանքների հետագա տարածումը տնտեսության իրական հատվածում:

Միաժամանակ՝ կարծես թե ճգնաժամը հնարավորություն է ընձեռում նախատեսվող օրակարգային միջոցառումները վերանայելու, ազատ շուկայի հիմունքների եւ շուկայական արժեքների մասով հանձնառությունները վերահաստատելու եւ ողջամիտ բարեփոխումների իրականացումն արագացնելու համար: Այդպիսի միջոցառումների շարքին կարելի է դասել հարկային, մաքսային, բանկային եւ ֆինանսական համակարգերի բարեփոխումները, որոնք ներկայում իրականացման փուլում են: Կառավարության համար առաջնահերթություն պետք է համարել նաեւ մեկաշնորհի դեմ պայքարը, ինչպես նաեւ կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը: Համապատասխան միջոցառումների կիրառումը պետք է կրի ինստիտուցիոնալ բնույթ, որպեսզի առողջանա ամբողջ համակարգը, այլ ոչ թե արդյունքը լինի կարճաժամկետ եւ կրի ձեւական բնույթ:

Անցումային տնտեսությամբ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, հետճգնաժամային զարգացման ժամանակահատվածում տնտեսական աճի ապահովման համար կենսականորեն կարեւոր նշանակություն ունեն քաղաքական եւ տնտեսական ինստիտուտները: Թույլ զարգացած ինստիտուցիոնալ միջավայրի առկայության ու գույքային իրավունքների թույլ պաշտպանվածության պայմաններում ներդրողները զգուշորեն են մոտենում տվյալ երկրի տնտեսության մեջ մասնակցություն ունենալու հարցին: Չարագած ինստիտուտների առկայության պարագայում, երբ ֆինանսական շուկաների գործունեությունը կանոնակարգող օրենքները համապատասխանում են առաջնային փորձին, դատարաններն անկախ են, գույքային վեճերը լուծվում են արդարացի, իրավապաշտպան մարմիններն օրենքը կիրառում են արդարացի եւ անաչառ, մասնավոր կապիտալ ներդրումների եկամտաբերության ցուցանիշները նույնպես աճում են: Այսպիսով՝ ինստիտուտների առկայությունը ներդրումների եւ նորարարությունների խթան է, ինչը սկզբունքային նշանակություն ունի երկարատեւ տնտեսական աճի ապահովման համար:

Շուկայական ինստիտուտների թերզարգացման եւ դրանց կատարելագործման խթանների բացակայության պայմաններում (ինչը բնորոշ է նաեւ տնտեսական ճգնաժամերի ժամանակաշրջաններին) կարող է էլ ավելի խորանալ գույքային անհավասարությունը: Անհավասարության բարձր աստիճանի առկայությունը մի շարք պատճառներով կարող է վնասել տնտեսական զարգացման գործընթացներին: Նախ՝ հասարակության անդամների գույքային անհավասարության եւ անարդյունավետ գործող կապիտալի շուկաների պայմաններում տաղանդավոր մարդկանցից շատերը զրկված են կապիտալ ձեռք բերելու կամ կր-

թություն ստանալու հնարավորությունից, ինչը հասարակության որոշ անդամներին թույլ չի տալիս դուրս գալ աղքատության վիճակից: Մյուս կողմից՝ գույքային անհավասարության բարձր աստիճանը կարող է նպաստել, որպեսզի փոփոխություններ կատարվեն եկամուտների վերաբաշխման պետական քաղաքականության մեջ, որը չի նպաստում տնտեսական զարգացմանը, քանի որ հարաբերականորեն աղքատ բնակչությունը նախընտրում է եկամուտների վերաբաշխման ավելի ակտիվ քաղաքականության իրականացում:

Ինչպես ցույց է տալիս տարբեր երկրների հակաճգնաժամային փորձի ուսումնասիրությունը³, ճգնաժամի ընթացքում հարկային բեռի ծանրացումը եւ հարկային ռեպրեսիաների կիրառումը բյուջեի մուտքերն ապահովելու համար այնքան էլ նպատակահարմար չէ եւ կաշկանդում է տնտեսական ակտիվությունը: Ներկայում անհրաժեշտ է կառավարության կողմից հակաճգնաժամային համալիր միջոցառումների իրականացում, մասնավորապես.

- Պահանջարկի խթանում՝ ենթակառուցվածքային նախագծերի ավելի ակտիվ իրականացման միջոցով: Ենթակառուցվածքային ծրագրերի ֆինանսավորումը շղթայական կերպով կբերի մյուս ճյուղերի արտադրանքի նկատմամբ պահանջարկի աճի, միաժամանակ կլուծվեն ներքին պահանջարկի բարձրացման, զբաղվածության ապահովման եւ ենթակառուցվածքների վիճակի բարելավման հարցերը, ինչն էլ վերջնարդյունքում կմեծացնի ընկերությունների մրցունակությունը:

- Առանձին ձեռնարկություններին (ճյուղերին) պետական աջակցություն ցուցաբերելիս հիմնական չափանիշը պետք է լինի ոչ թե ընկերության (ճյուղի) չափերը, այլ դրա արդյունավետությունը, արտաքին կամ ներքին շուկայում բարձր մրցունակության ներուժը:

- Սոցիալական բացասական հետեւանքներից զերծ մնալու համար անհրաժեշտ է իրականացնել առաջին անհրաժեշտության ապրանքատեսակների գնադրացման մեխանիզմների բարելավում: Խոսքը մասնավորապես լայն սպառման ապրանքներ (ծառայություններ) թողարկող ճյուղերի հարկային բեռի թեթեւացման մասին է: Մասնավորապես նպատակահարմար է դիտարկել ավելացված արժեքի հարկի դրույքաչափերի տարբերակման հարցը: Ներկայում կիրառվող 0% կամ 20% դրույքաչափերի փոխարեն թերեւս կարել է կիրառել նաեւ 10% եւ 30% դրույքաչափերը՝ կախված արտադրանքի բնույթից՝ առաջին անհրաժեշտության ապրանք է, թե ոչ: Նման մոտեցում կարող է կիրառվել նաեւ մյուս հարկատեսակների, ինչպես նաեւ մաքսատուրքերի մասով:

- Ճգնաժամի պայմաններում անհրաժեշտ է փոխել մոտեցումները կառավարչական որոշումներ ընդունելիս: Մասնավորապես պետք է արագ արձագանքել կատարվող իրադարձություններին, եւ համապատասխան քայլերը պետք է լինեն ժամանակին: Ֆինանսական ռեսուրսների խիստ խնայողության պայմաններում դրանք անհրաժեշտ է ծախսել առավելագույն արդյունավետությամբ: Այդ նպատակով անհրաժեշտ է համապատասխան որոշումներ ընդունող մարմինների կազմում ընդգրկել ճգնաժամային պայմաններում աշխատելու փորձ ունեցող արհեստավարժների: Պետք է քայլեր ձեռնարկել պետության՝ հասարակության եւ բիզնեսի միջեւ ընդհանուր հասարակական երկխոսություն ձեւավորելու ուղղությամբ: Դա թույլ կտա կառավարչական որոշումներ կայացնող անձանց համար ապահովել տնտեսության մեջ կատարվող գործընթացների վերաբերյալ արժանահավատ տեղեկատվություն, գնահատել կատարված քայլերի արդյունքները, ինչպես նաեւ ձեւավորել հաղորդակցային արդյունավետ քաղաքականություն, ինչը կթուլացնի տնտեսության մեջ ձեւավորված բացասական սպասումները եւ զգալի կմեղմի սոցիալական լարվածությունը:

Հայաստանը դեռ նոր է ցանկանում մասնակից դառնալ համաշխարհային տնտեսության գլոբալ զարգացման գոր-

ծընթացին, ուստի՝ կարող է հաշվի առնել կուտակված փորձը եւ կատարել որոշակի քայլեր: Առաջին հերթին անհրաժեշտ է ճիշտ գնահատել Հայաստանի համեմատական առավելությունները եւ ըստ այդմ որոշել այն առաջնայնությունները, որոնք հաշվի առնելով կարող ենք մասնակցել այդ գործընթացին:

Երկրորդ, Հայաստանի Հանրապետությունը պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի իր տնտեսական առաջնայնությունների ֆինանսավորմանը, տեխնոլոգիական վերագինման եւ զարգացման խնդիրներին, որպեսզի ավելի ամրագրվեն այդ ոլորտների համեմատական առավելությունները:

Կարծում ենք՝ Հայաստանի թիվ մեկ առաջնայնությունը մարդկային կապիտալի զարգացումն է, տնտեսության մեջ բարձր որակավորում ունեցող մասնագետների զբաղվածության կայունացման եւ նրանց կարողությունների արդյունավետ օգտագործման խնդիրները: Դա կարելու է ևս եւ այն պատճառով, որ Հայաստանը բնական հարուստ ռեսուրսներ չունեցող երկիր է, ուստի էլ չի կարող ընտրել ճգնաժամի հաղթահարման այն ճանապարհը, որով ընթացում է բնական հարուստ պաշարներ ունեցող՝ զարգացող տնտեսությունները:

Երկա ճգնաժամից հետո ընկած ժամանակահատվածում կարելու է խնդիրը տնտեսական աճի ներուժի բարձրացումն է: Սա վերաբերում է անցումային տնտեսությանը բոլոր երկրներին (այդ թվում՝ Հայաստանին), որոնց բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մակարդակները շարունակում են մնալ ցածր: Ընդգեղծելու է բնական այլ ռեսուրսներ արտահանող երկրներում ռեսուրսների նկատմամբ համաշխարհային պահանջարկը տնտեսական աճի շարժիչ ուժ կդառնա, մինչդեռ մյուս երկրները ստիպված են լինելու փնտրել տնտեսության զարգացման այլ ուղղություններ: Մասնավորապես՝ Ընդգեղծելու է ռեսուրսներ ներմուծող երկրների դեպքում նավթի գների բարձրացումը կարող է տնտեսական աճի արգելք հանդիսանալ, թեև դրա հետ մեկտեղ կնկատվեն նաեւ տարածաշրջանում եւ Ռուսաստանում Ընդգառնեսուրսներ արտահանողների կողմից դրական երկրորդային էֆեկտները: Նկատի ունենալով արդյունաբերական զարգացած երկրներում տնտեսական աճի կանխատեսվող դանդաղ վերականգնումը, հետագա աճի համար օգտակար կարող է լինել արտահանման դիվերսիֆիկացումը տարածաշրջանի սահմաններում՝ զարգացող երկրների ձեռավորվող շուկաների ուղղությամբ: Ընդգառնեսուրսներ ներկրող երկրների մեծ մասը կարող է օգուտներ քաղել հետագայում իրականացվող բարեփոխումներից, որոնք կաջակցեն մասնավոր հատվածի գործունեությանը եւ կբարելավեն ներդրումային միջավայրը:

Դիվերսիֆիկացիա (diversification) կամ բազմազանություն հասկացությունը մեկնաբանվում է հետեւյալ կերպ. տարածաշրջանում արդյունաբերության ճյուղերի բազմազանություն կամ էլ ընկերությունների կողմից առաջարկվող ապրանքների լայն տեսականու առկայություն: Առաջին դեպքում, տարածաշրջանային արդյունաբերական կառուցվածքի դիվերսիֆիկացման հետ մեկտեղ, ավելանում են արդյունաբերության ճյուղերը, ինչն իր հերթին նպաստում է զբաղվածության հնարավորությունների ավելացմանը: Այնպիսի տարածաշրջաններում, որտեղ դեռեւս առկա են արդյունաբերական ճյուղերի ճգնաժամի հետեւանքները, կառավարության, պետական մարմինների ազգամվարությունը դիվերսիֆիկացիան է, որը նպատակաւղղված է տեղում զբաղվածության մակարդակի ավելացմանն ու կայունացմանը:

Ընկերությունների տեսանկյունից դիվերսիֆիկացիան նշանակում է շուկաներում առաջարկվող ապրանքների տեսականու ընդլայնմանն ուղղված քաղաքականություն, ինչը հիմնավորվում է այն բանով, որ նվազեցվում է քիչ թվով ապրանքների թողարկումից կախվածությունը: Ընկերությունների դիվերսիֆիկացումը հաճախ իրականացվում է միաձուլումների եւ կլանումների ճանապարհով, ընդ որում՝ կլանված ընկերության (victim company)՝ շուկայում վաճառվող ապրանքներն օգտագործվում են կլանած ընկերության (raider firm) ապրանքային տեսականու ընդլայնման համար:

Օգտագործվում է նաեւ դիվերսիֆիկատոր (diversifier) հասկացությունը, որը կիրառելի է ներդրողների առումով: Դրանք այնպիսի ներդրողներն են, որոնք իրենց ունեցվածքի մի մասը պահում են փողի տեսքով, իսկ մնացածը՝ արժեթղթերում (հիմնականում պետական, ոսկով ապահովված արժեթղթերում): Տոկոսադրույքների աճի ժամանակահատվածում այդպիսի ներդրողները ձգտում են իրենց ունեցվածքի մեծ մասը վերածել արժեթղթերի՝:

Դիվերսիֆիկացիա նշանակում է նաեւ տարբեր ակտիվներում ներդրումներ կատարելու եղանակով ռիսկի նվազեցում, իսկ դիվերսիֆիկացիայի սկզբունքը սահմանվում է որպես տնտեսություն, որի համաձայն՝ ներդրողները ռիսկային ակտիվների տարբերակման միջոցով կարող են նվազեցնել ընդհանուր ռիսկը՝ առանց եկամտաբերության կորստի՝:

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման մյուս հիմնահարցը կապված է դրամական փոխանցումների հետագա դիմամիկայի հետ: Դրանք արագ աճը մինչեւ 2008թ. ընկած ժամանակահատվածում սերտ կապված էր Ռուսաստանում եւ Հայաստանում շինարարության ոլորտի դինամիկ զարգացման հետ: Հաշվի առնելով Ռուսաստանի տնտեսության ավելի սահմանափակ հեռանկարները՝ հավանաբար

1. Նշենք, որ անցումային տնտեսությամբ 30 երկրների շարքում Հայաստանը, 2009թ. արձանագրված 14.4% ՀՆԱ անկմամբ, վերջից երրորդ տեղն է զբաղեցնում: Ավելի խոր անկում տեղի է ունեցել միայն Լիտվայում (18.4%) եւ Լատվիայում (-16.0%) . տես՝ Transition report 2009, Transition in crisis?, EBRD, 2009, p. 21:

2. Համեմատությունների համար կարելի է ուսումնասիրել մասնավորապես՝ 33 ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999թ. հունվար-դեկտեմբերին, Եր. 2000, 33 ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2009թ. հունվար-դեկտեմբերին, Եր. 2010

3. Դրանք ակտիվիված են օրինակ՝ Հարությունյան Վ., Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ, 33 ԳԱԿ «Գիտություն» հրատ., Եր. 2009, 146 էջ, Պետրոսյան Մ., Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունները արդի պայմաններում, Եր., Էդիթ Պրինտ, 2009, 240 էջ